ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

18.12.2020 *Ք. Իջևան*

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Կիրառական արվեստի ֆակուլտետի խորհրդի նիստին մասնակցում էին գիտական խորհրդի 14 անդամներից 11-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020-2021 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստում: /Զեկուցող դեկանին փոխարինող՝ Վ. Աղաբաբյան/
2. 2020-2021 ուստարվա երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստման և անցկացման մասին: /Զեկուցող դեկանին փոխարինող՝ Վ. Աղաբաբյան/

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանին փոխարինող Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ կազմվել է քննաշրջանի ժամանակացույցը, որը քննարկվել է ամբիոններում և ուսանողների շրջանում: Զեկուցողը նշեց, որ համավարակով պայմանավորված, քննությունների մի մասը կիրականացվի լսարանայի պայմաններում, մյուս մասը հեռավար՝ Zoom հարթակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Գ. Ջավրուշյանը, դոցենտ Հ. Ասատրյանը և ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-2021 ուստարվա առաջին քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցողը ներկայացրեց 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը: Նշեց, որ այն քննարկվել է ուսանողների հետ: Այժմ ստուգվում է ֆակուլտետում առարկայական ծրագրերի կատարման ընթացքը: Զեկուցողը խոսեց նաև ֆակուլտետում իրականացված դասալսումների մասին: Դասախոսությունների հեռավար իրականացումը լայն հնարավորություն է տալիս ամբիոնի վարիչներին դասալսումներ իրականացնել: Զեկուցողը նաև հավելեց, որ քննաշրջանը կկազմակերպվի ինչպես հեռավար՝ ZOOM հարթակի միջոցով, այնպես էլ առկա՝ պայմանավորված որոշ առարկաների առանձնահատկություններով: Հսկողություն կլինի թե՛ դեկանատի, թե՛ Ուսումնամեթոդական վարչության աշխատակիցների կողմից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Դոցենտ Հ. Ասատրյանը, ՀՆՄ անդամ Ան. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-2021 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ	Ա. Մարգարյանը
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Ք. Մխիթարյանը